ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87Ա

«26» հոկտեմբեր 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ N 2980-Ա

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս քննարկելով ֆիզիկական անձ Արման Զորիկի Գրիգորյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ N 31497/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ Արման Զորիկի Գրիգորյանի (Հասցե՝ ք. Երևան, Դավիթաշեն, 2 թղմ. 18 շ. 57 ՀՎՀՀ՝ 37450473, ՀԾՀ՝ 1105850439) չկատարված հարկային պարտավորությունը 15.06.2021 թվականի դրությամբ կազմել է 118.301 դրամ, որից հարկ՝ 101.250 դրամ, տույժ՝ 17.051 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով 30.09.2022թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի ներկայացրել:

ՀՀ ոստիկանության <<Ճանապարհային ոստիկանություն>> ծառայությունից ստացված շարժական գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների ֆիզիկական անձի կողմից 07.08.2019թ. օտարվել է 23.05.2019թ. ձեռք բերված MERCEDES-BENZ E 350 մոդելի 2009թ. արտադրության 272 ձիաուժ հզորությամբ, 26.10.2019թ. օտարվել է 26.10.2019թ. ձեռք բերված HONDA ODYSSEY 3.5 մոդելի 2012թ. արտադրության 248 ձիաուժ հզորությամբ, 09.11.2019թ. օտարվել է 09.11.2019թ. ձեռք բերված TOYOTA VOXY 2.0 մոդելի 2006թ. արտադրության 155 ձիաուժ հզորությամբ:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 140-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձը հանդիսանում է եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝ եկամտային հարկով հարկման բազան՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար, որոշվում է Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերությամբ: Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն նվազեցվող եկամուտ են համարվում՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի) օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները: Սույն կետի կիրառության իմաստով՝

ա. մինչև 29.06.2019թ-ի գործող խմբագրության համաձայն ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում հարկային տարվա ընթացքում երկրորդ անգամ ավելի թվով

ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենաների և ձեռքբերումը, և օտարվումը տեղի են ունեցել 365 օրվա ընթացքում,

բ. 29.06.2019թ-ից գործող խմբագրության համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենան օտարվում է ձեռք բերելուց հետո՝ 365 օրվա ընթացքում:

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքում ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարումից (այդ թվում՝ նաև այն դեպքում, երբ գույքն օտարվում է անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից տարբերվող և հարկային գործակալ չհանդիսացող անձի) ստացվող ամբողջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 1 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս, քան ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի շարժիչի յուրաքանչյուր ձիաուժ հզորության համար 150 դրամից: Շարժիչի հզորությունը կիլովատերով արտահայտված լինելու դեպքում համապատասխան հզորության նկատմամբ կիրառվում է 1.36 գործակից:

Օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձը, հանդիսանալով եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտավոր է մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի տարեկան հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների գումարը՝ համաձայն Օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի:

Ֆիզիկական անձ Արման Զորիկի Գրիգորյանի կողմից իրականացված վերը նշված գործարքների մասով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և չի կատարվել հարկերի վճարումներ:

Արդյունքում՝ սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը եկամտային հարկի գծով կազմել է 118.301 դրամ, որից հարկ 101.250 դրամ, տույժ՝ 17.051 դրամ, որն առաջացել է ֆիզիկական անձի կողմից շարժական գույքերի օտարման գործարքների արդյունքում և ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասին 64-րդ, 66-րդ կետերով, 398-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 59, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ֆիզիկական անձ Արման Զորիկի Գրիգորյանից գանձել **118.301** դրամ պարտավորության գումար համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

15.06.2021թ-ի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	20.04.2020թ	101.250	17.051		**118.301**	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ծառայություն:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ

0015 Երևան, Մ. Մաշտոցի

3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել ֆիզիկական անձին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին, կամ վերադաս վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ԱՐՄԱՆ ԴՅԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը ____________ ______________________________ __________

Ստորագրություն | հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն | ամսաթիվ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Կատարող՝ ՀՀ ՊԵԿ ԻՎ ՀԳՊԿԱ բաժնի
գլխավոր մասնագետ Կարեն Հովհաննիսյան
հեռ՝ 010-30 91 91 (9128)